Ազգ
Azg
17 ՆՈՅԵՄԲԵՐ 2012 ՇԱԲԱԹ 205(5057)
ISSN: 1829-1651

# Ադրբեջանա-իրանական լարվածության նոր աղբյուր

Գազայի հատվածի վրա Իսրայելի ռազմական հարձակման հետեւանքով առաջացած իրավիճակը կարող է լարվածության նոր աղբյուր լինել Ադրբեջանի ու Իրանի միջեւ: Իրանը, լինելով Չմիավորվածների շարժման անդամ, իսկ այժմ նաեւ Շարժման նախագահող երկիր, պահանջել է միավորման բոլոր անդամներից՝ «խզել հարաբերությունները Իսրայելի հետ»: Անցյալ տարվանից Չմիավորվածների շարժման լիիրավ անդամ է նաեւ Ադրբեջանը, հետեւաբար Իսրայելի հետ հարաբերությունները կասեցնելու իրանյան պահանջը վերաբերում է նաեւ Բաքվին (իսկ հաշվի առնելով Ադրբեջանի աշխարհագրական դիրքը Իրանի համար, հատկապես՝ Բաքվին - Հ. Ա.): Վերջինս, սակայն, հայտնի է Իսրայելի հետ ջերմ հարաբերություններով ու, ըստ որոշ աղբյուրների, հրեական պետության աշխարհաքաղաքական նպատակների իրագործման ճանապարհին Թել Ավիվին օժանդակելու ցանկությամբ:

«Ազգը» մի քանի անգամ անդրադարձել է իսրայելա-ադրբեջանական հարաբերություններին, հարեւան երկրի՝ Իրանին սահմանակից հարավում Իսրայելի հետախուզական խմբերի առկայության հավանականությանը, ադրբեջանա-իսրայելական հատկապես ռազմական ոլորտում խոր համագործակցությանը եւ Արցախի երկնքում կործանված Իսրայելի արտադրության անօդաչու ռազմական ինքնաթիռին, ինչպես նաեւ Իսրայելի ԱԳ նախարար Ավիգդոր Լիբերմանի՝ Բաքվի ու այդ քաղաքի հյուրընկալության հանդեպ տածած հատուկ սիրուն: Հետեւաբար, հնարավոր է, որ հասունանում է նոր ադրբեջանա-իրանական լարվածություն, ինչին եթե գումարենք նաեւ Ադրբեջանի ու «նոր» Վրաստանի հարաբերություններում նկատվող որոշակի սառնությունը, ապա կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ Ադրբեջանը խնդիրներ կունենա անխտիր իր բոլոր հարեւանների հետ, հավելյալ՝ Կասպից ծովի ավազանում այդ երկրի ունեցած խնդիրները: Իսկ նման պարագայում, երբ շուրջբոլորդ բոլորը մեղավոր են, առաջին մեղավորը ինքդ ես:

Հ. ԱՓՅԱՆ

# Ռուբեն Միրզախանյան. «Լսարան պետք է մտնի մասնագիտության մեջ հեղինակությունը»



Հայաստանի պետական մանկավարժական համալսարանը բոլորեց իր 90-ամյակը: Ողջ տարին եւ հատկապես այս օրերին հոբելյանական միջոցառումներ են տեղի են ունենում համալսարանում: Գլխավոր միջոցառումը նոյեմբերի 19-ին է, որին մասնակից կլինեն բազմաթիվ հյուրեր, հին ու նոր համալսարանականներ, արտերկրի գործընկերներ: Նոյեմբերի 5-ին հոբելյանական միջոցառումներին մասնակցելու համար ժամանեց Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի ռեկտորը, Հարավային Քոնեքթիքուտի համալսարանի նախագահ, դոկտոր Մերի Փափազյանը հատուկ այդ առիթով Երեւան է գալիս, նա առաջին հայազգի կինն է, որ ԱՄՆ-ում դարձավ համալսարանի նախագահ: Հյուրերի մեջ են լինելու Կիեւից Ռագոմանովի անվան ազգային համալսարանի ռեկտոր ակադեմիկոս Անդրյուշչենկոն (տպավորություն), որը Եվրոպայի մանկավարժական համալսարանների ասոցիացիայի նախագահն է, Վիլնյուսի կրթական գիտությունների համալսարանի ռեկտորը՝ տպավորությամբ: Եվրոպական խոշորագույն համալսարաններից մեկի՝ Սոֆիայի համալսարանի ռեկտոր Իլչեւն է պատվելու մանկավարժականի հոբելյանական արարողությունը: Լինելու են պատվիրակություններ Ֆրանսիայից, Ռուսաստանից, մի խոսքով՝ հյուրերի ներկայացուցչական օտարերկրյա կազմ ունենք, եւ սա փաստորեն այսօր վկայություն է, որ Մանկավարժական համալսարանն աշխարհում ճանաչում են, նրա հետ ցանկանում են համագործակցել եւ համալսարանը հեղինակություն ու վարկ է ձեռք բերում արտերկրի իր գործընկերների շրջանում:

Մանկավարժական համալսարանը հիմնադրվել է 1922 թվականին, մինչ հիմնադրումը եղել է Երեւանի պետական համալսարանի մանկավարժական ֆակուլտետ որպես երկու տարի, ունեցել է կառուցվածքային փոփոխությունների շրջան, առանձին բուհ է դարձել, հետո կրկին միացել է, հետո առանձնացել ու գնացել է իր ուղիով: Հոբելյանն առիթ դարձավ զրուցելու մանկավարժական համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մշակույթի վաստակավոր գործիչ, Թեքեյան մշակութային միության նախագահ Ռուբեն Միրզախանյանի հետ:

Տես էջ 4

# Հանգիստ շնչում ենք

**Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ եվրոպական տարածաշրջանում գրիպի եւ սուր շնչառական վարակների առումով ներկայումս համաճարակային իրավիճակը լարված չէ, եւ դիտվում է գրիպի ու սուր շնչառական վարակների ցածր ինտենսիվություն:**

**Ընդհանրապես, եվրոպական տարածաշրջանի երկրներում հիմնականում արձանագրվում են գրիպի Ա եւ Բ տեսակները, եւ գերակշռում է, այսինքն՝ դեպքերի 96 տոկոսի շրջանում հայտնաբերվում է գրիպի Ա տեսակը: Գրիպի տեսակների տարածվածության նման պատկեր դիտվում է նաեւ Հայաստանում: Իսկ գրիպի ու սուր շնչառական վարակների համաճարակային իրավիճակի վերաբերյալ առողջապահության նախարարությունը տեղեկացնում է, որ իրավիճակը լարված չէ:**

Ի. Պ.

# Իսլամական ներկայության պատճառով տոնածառի արգելք Եվրոպայում

Բելգիայի մայրաքաղաք Բրյուսելից բացի, ամանորյա տոնածառից կարող է զրկվել նաեւ Կոպենհագենի (Դանիա) մերձակա քաղաքներից մեկը: Քաղաքի վարչակազմը, որտեղ մեծամասնություն են կազմում մահմեդականները, անիմաստ է համարում փող ծախսել մահմեդականների համար անհասկանալի տոնակատարության վրա:

Վարչակազմը արգելել է տոնածառ եւ այլ խորհրդանիշներ տեղադրել նաեւ մասնավոր անձանց միջոցներով: Հատկանշական է, որ վերջերս հենց այդ քաղաքում մահմեդականների Ղուրբան-բայրամ տոնը նշվեց լայն ծավալով եւ մանավանդ հանրային միջոցներով:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ այս տարի Բրյուսելում եւս չի տեղադրվի տոնածառ, որին կփոխարինի «էլեկտրոնային ձմեռային ծառը»՝ բազմաթիվ էկրաններով 25-մետրանոց մի կառույց: Ոմանք ասում են, որ դա արվում է քաղաքի բնակչության 25 տոկոսը կազմող մահմեդականներին քրիստոնեական խորհրդանիշով չվիրավորելու համար:

Ֆլամանդացի քրիստոնեա-դեմոկրատների առաջնորդներից մեկը՝ Բիանկա Դեբաենսը, հայտարարել է, որ «տոնածառի արգելման» որոշումը կապված է բացառապես քրիստոնյաներին հալածելու փաստի հետ: Այդ հայտարարությունից հետո Բրյուսելի իշխանություններն աճապարեցին հայտարարել, թե պատճառը մահմեդականները չեն, սակայն չկարողացան բացատրել, թե ինչու Բրյուսելի ավանդական «Ծննդյան տոների շուկան» վերանվանվել է «Ձմեռային հաճույքներ»:

Բրյուսելի ավելի քան 12 հազար բնակիչներ ստորագրել են հանրագիր, որով կոչ է արվում կանաչ եղեւնին վերադարձնել քաղաքի գլխավոր հրապարակ: Նրանք որոշել են դեկտեմբերի 8-ին հրապարակում հավաքվել իրենց տոնածառներով:

ԳՅՈՒՄՐԻ

# Միայնակ շատ մայրերի երեխաներ՝ թերսնվածությունից մշտապես հիվանդ

«Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպությունը, պարբերաբար հանդես գալով Գյումրու առավել ծանր կենցաղային ու սոցիալական պայմաններում ապրող ընտանիքների մասին հրապարակումներով, հատկապես ուշադրության կենտրոնում է պահում երեխաներին ու նրանց հիմնախնդիրները:

«Անի» թաղամասի ծայրամասում գտնվող շենքերից մեկի առաջին հարկում է բնակվում միայնակ մայր Գայանե Գեւորգյանն իր երկու մանկահասակ երեխաների եւ տարեց ու հիվանդ ծնողների հետ, որոնց մասին է կենտրոնի հերթական հրապարակումը: Ըստ վերջինիս՝ նրանց ապրուստի միակ միջոցը երեք ամիսը մեկ 16 հազար դրամ սոցիալական աջակցությունն է եւ տատիկի փոքրիկ աշխատավարձը: Ընտանիքին անհեթեթ պատճառաբանություններով վաղուց զրկել են սոցիալական նպաստից, իսկ «Հայռուսգազարդի» աշխատակիցները երկու տարի առաջ 30 հազար դրամ պարտքի պատճառով ոչ միայն անջատել են տան գազամատակարարումը, այլ նաեւ գազահաշվիչն են հանել ու տարել: «Շիրակ կենտրոնի» աշխատակիցների վկայությամբ՝ այս մարդկանց այցելելիս կարելի է նկատել ոչ միայն ծայրահեղ աղքատությունը, այլ նաեւ այն, որ երեխաներն իրենց իրական տարիքից անհամեմատ փոքր են երեւում: Երեխաների մոր պատմելով՝ փոքրիկները թերսնվածության պատճառով մշտապես հիվանդ են, իսկ 6-ամյա տղա երեխան ոսկրային հիվանդություն է ձեռք բերել, սակայն բուժման համար միջոցներ չունեն...

«Նրանց օրինակով,- նշվում է հրապարակման մեջ,- կարելի է ընդհանուր պատկերացում կազմել, թե ինչպես են բնակվում աղքատ ընտանիքները, ովքեր ու ինչպես են խորացնում աղքատությունը Գյումրիում՝ հոգեբանական ու առողջական խոր եւ անբուժելի վերքեր հասցնելով հատկապես այդ ընտանիքների երեխաներին»:

Գ. Ս.

# «Համասի» համար խոցելի է դարձել նույնիսկ Թել Ավիվը

*Եգիպտոսի վարչապետի եւ Թունիսի արտգործնախարարի այցերը Գազայի հատվածը դուրս են բերում մեկուսացումից եւ ճեղքում շրջափակումը*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

«**Ազգի**» նախորդ համարում, «Պաղեստինցիների պատասխան գործողությունները խուճապ են առաջացրել Իսրայելում» վերնագրով, նշել էինք, թե ինչպես իսրայելական կառավարությունը դիմել էր Եգիպտոսի ղեկավարությանը, որ զինադադարի հարցում «Համասին» համոզելու համար միջնորդություն հանդես բերի, բայց կտրականապես մերժվել էր:

Մերձման պայմաններում Իսրայելը ոչ միայն շարունակել է Գազայի հատվածի վրա հարձակումները, այլեւ զորահավաք է հայտարարել, ենթարկելով զորակոչի 30 հազար մարդու, որից 16 հազարը պահեստային զինվորներն են:

Նոյեմբերի 15-ի լույս 16-ի գիշերը իսրայելական օդուժը 200 հարված է հասցրել, որի հետեւանքով սպանված պաղեստինցիների թիվը հասել է 23-ի, վիրավորներինը՝ 235-ի: Այդ ընթացքում Պաղեստինի իսլամական ջիհադ կազմակերպության «Էլ Կուդսի» եւ «Համասի» Իզեդդին ալ Քասսամի բրիգադները արձագանքել են պատասխան գործողություններով:

Գազայից Իսրայելի վրա արձակված հրթիռներից 150-ը, որոնք արդեն ինքնաշեն չեն, այլ ռուսական եւ իրանական արտադրանք, չեզոքացրել է հակաօդային պաշտպանության «Երկաթե տանիք» համակարգը, շուրջ 50-ը, սակայն, հասել է նպատակակետին:

Պաղեստինցիներին հաջողվել է նաեւ խոցել իսրայելական 1 զրահամեքենա եւ 3 անօդաչու ինքնաթիռ: Եթե ճիշտ են ինքնաթիռների խոցման լուրերը, ապա դժվար չէ կռահել, որ պաղեստինցիները, բացի ռուսական «Կասյուշա» եւ իրանական «Ֆաջր-5» հրթիռներից, ունեն նաեւ շարժական զենիթահրթիռային համալիրներ: Ահա թե ինչու Իսրայելը զինադադարի համար միջամտության խնդրանքով Եգիպտոսից հետո դիմում է նաեւ եվրոպացիներին, իսկ «Համասը» ի լուր աշխարհին հայտարարում. «Ստեղծված իրավիճակում Իսրայելի հետ որեւէ զինադադար չենք կնքի»:

«Համասի» հայտարարության առումով, բացի հրթիռներից ու համալիրներից, որոնք պաղեստինցիների համար խոցելի են դարձրել նույնիսկ Թել Ավիվը, կարեւոր է նաեւ Եգիպտոսի վարչապետ Հիշամ Ղանդիլի, սոցապնախարարի, հետախուզության պետի եւ երկրի նախագահի քաղաքական հարցերով խորհրդականի ուղեկցությամբ երեկ Գազայի հատված իրականացրած այցը: Այսօր Գազա կայցելի նաեւ Թունիսի արտգործնախարար Ռաֆիկ Աբդուսալամը, որին էլ կուղեկցի երկրի նախագահի գլխավոր խորհրդականը:

Գազայի հետ սահմանային «Ռաֆահ» անցակետի բացումը, Եգիպտոսում Իսրայելի դեսպանի երկրից վտարումը, Իսրայելում Եգիպտոսի դեսպանի հետկանչումն ու Թունիսի արտգործնախարարի Գազա նախատեսվող այցելությունը արաբական գարնան թերեւս ամենադրական արդյունքը պետք է համարել:

Տես էջ 3

## ՀՊՄՀ 90-ԱՄՅԱԿ

# Ռուբեն Միրզախանյան. «Լսարան պետք է մտնի մասնագիտության մեջ հեղինակությունը»

*1-ին էջից*

**- Վերջերս այլ բուհերից մեկի դասախոսներից մի խոսակցություն լսեցի, որ հիմա Մանկավարժականի վարձատրությունն ու ծրագրերը լավն են եւ կուզենային այստեղ դասավանդել: Մանկավարժականի իմիջը փոխվել է փաստորեն, ի՞նչն է ձգում մարդկանց:**

- Եթե կան դրական փոփոխություններ՝ դրանք նախապատրաստված են եղել համալսարանի նախորդ տարիների գործունեությամբ: Ասելով նախորդ տարիներ, ես, ամենայն անկեղծությամբ, նկատի չունեմ միայն վերջին 10-15 տարին: Պատկերացրեք, թող չլինի դա չափազանցություն, բայց 90 տարվա պատմությամբ իր բոլոր դեգերումներով, իր բոլոր դրական կամ անգամ բացասական դրսեւորումներով համալսարանականները նախապատրաստել-ստեղծել են շատ որոշակի հնարավորություն, որպեսզի համալսարանն ունենա դրական զարգացում: Անհնար կլիներ այս վերջին երկու տարում դասախոսների աշխատավարձ բարձրացնել, իսկ այն հունվարից կրկնապատկվում է փաստորեն (երկու տարի առաջ ստանում էին երկու անգամ ավելի քիչ, քան ստանալու են հունվարին), եթե նախորդ տարիների ընթացքում բավականին հետեւողական եւ լուրջ աշխատանք չկատարվեր ուսանողների թվի բարձրացման ուղղությամբ: Այնպես որ շնորհակալ եմ բոլոր նախորդ ռեկտորներին, եւ շնորհավորում եմ բոլորին Մանկավարժական համալսարանի 90-ամյակի կապակցությամբ, որն իրադարձություն է:

**- Այնուամենայնիվ՝ համալսարանի բյուջեն վերջին երկու տարում չի փոխվել, միգուցե կառավարման այլ մոդել եք ներդրել, նոր մեխանիզմներ կիրառել, ճշգրտեմ հարցս՝ արդյունավետ կառավարման մոդելը գուցե դե՞ր ունի աշխատավարձերը բարձրացնելու հարցում:**

- Իհարկե, յուրաքանչյուր ղեկավար յուրովի է պատկերացնում խնդիրները եւ յուրովի է կառավարում: Ես ի սկզբանե գտել ու գտնում եմ, որ առաջնայինը դասախոսների վարձատրության հարցն է մեր ֆինանսական ծախսերի մեջ՝ շատ հստակ իմանալով նաեւ մի տնտեսագիտական ճշմարտություն, որ եթե բյուջեի զգալի մասը, մի 70-80 տոկոս գնում է աշխատավարձին, ապա նման հաստատությունը ոչ արդյունավետ է համարվում տնտեսական զարգացման տեսանկյունից: Այո՛, ճիշտ կլիներ, որ բյուջեի զգալի մասը գնար զարգացման ծրագրերին՝ շինարարությանը, նոր տեխնիկայի ձեռքբերմանը: Բայց երբ տեսնում ես, թե պրոֆեսորը ստանում է 100 կամ 150 դոլարին համարժեք դրամ, դա խեղկատակություն է, դա անընդունելի է: Այդ մարդն իր գիտակից կյանքը նվիրել է սովորելուն եւ սովորեցնելուն, իսկ այդպիսի մարդիկ երբեք հարուստ չեն լինում, այդ մարդիկ հարուստ չեն կարող լինել, նաեւ ողջ աշխարհում է այդպես: Այո, շատ հետեւողական քաղաքականություն ենք իրականացնում, որպեսզի աշխատավարձի բարձրացում լինի: Եւ ես ձեզ շատ անկեղծ ասեմ՝ ես գտնում եմ, որ այսքան բարձրացնելուց հետո անբավարար է աշխատավարձը, որովհետեւ դասախոսը, ինչպես նաեւ ուսուցիչը պետք է կարողանա չեմ ասում՝ շքեղ, բայց նորմալ ապրել: Մենք ասում ենք՝ մեր ուսուցչի նկարագրով պայմանավորված է մեր ազգային դպրոցի ապագան, բայց ազգային դպրոցի ուսուցիչը երբ որ գրոշներ է ստանում, քիչ է վարձատրվում, դա շատ վատ է: Իսկ երբ ուսուցիչ պատրաստող պրոֆեսորն է գտնվում այդ վիճակում, դրանից էլ արդեն հազար ու մի վատ հետեւանքներ են լինում, արդեն սկսում են գոյատեւման այլ միջոցներ հայթայթել, որոնք մեղմ ասած՝ ոչ բոլոր դեպքերում են լինում բարոյական:

**- Ձեր այսպիսի քաղաքականությունն ազդե՞լ է կրթության որակի վրա եւ ի՞նչ եք պատասխանում այն մեկնաբանություններին, թե Մանկավարժականի կառավարման խորհրդի նախագահը վարչապետն է, այդ պատճառով Մանկավարժականին լավ են նայում եւ այլն...**

- Այո՛, կառավարման խորհրդի նախագահը երկրի վարչապետն է, բայց դա ոչ մի լումայով երեւիցե չի փոխել մեր բյուջեն: Դրա հետ կա մի ուրիշ ճշմարտություն, որ ես վարչապետից ստացել եմ առաջին հանձնարարականը՝ 40 տոկոսով բարձրացնել աշխատավարձը, իսկ խորհրդի նախագահի հանձնարարականը կատարվել է, եւ վերջերս երկրորդ հանձնարարականը՝ մի ամիս առաջ եւս 40 տոկոս բարձրացնել, որ տեղի կունենա հունվարին: Իսկ դա կրթության որակի վրա, այո՛, ազդում է: Այսուհանդերձ, ազդեցության բաղադրիչներից մեկն է, բայց ոչ միակը: Կարեւոր, բայց ընդամենը՝ մեկը: Կան տարբեր չափանիշներ՝ որակի ապահովման, նույնիսկ հատուկ ծրագրեր կան՝ կառավարության, նախարարության կողմից այդ ուղղությամբ, շատ սեմինարներ են անցկացնում: Ինչպե՞ս որոշել որակը՝ երկու կոմպոնենտով. ովքեր են դասավանդում եւ ովքեր են շրջանավարտները: Ովքեր են շրջանավարտները՝ դա ցույց է տալիս, թե աշխատանքն ի՞նչ որակ է տվել: Ո՞վքեր են դասավանդում՝ դա ամենից կարեւոր հանգամանքն է: Կան ցանկեր՝ օրինակ՝ աշխարհի առաջատար 100 համալսարանների, որոնք վկայում են այդ համալսարանների որակի մասին: Եվ մեկ էլ տեսնում ես՝ այս կամ այն համալսարանն առաջին տեղից տեղափոխվել է երկրորդ տեղ կամ ավելի ներքեւ է իջել: Հարց է առաջանում՝ որո՞նք են որակի չափանիշները, ինչպե՞ս են որոշվում: Պատկերացրեք՝ այդ չափանիշներից շատ կարեւոր է, թե ո՞վքեր են դասավանդում: Երբ հետաքրքրվում ես, թե այս կամ այն համալսարանն ինչո՞ւ է տեղը զիջել, ասում են՝ գիտեք այնտեղ Նոբելյան մրցանակի այսքան դափնեկիր կա, մեկը մեծահասակ էր, մահացավ, դրա համար մեկ կամ երկու տող տվյալ համալսարանը զիջեց տեղը: Իհարկե, հաշվի է առնվում նաեւ գիտատեխնիկական հագեցվածությունը, եւ այլ բաներ, բայց կարեւորագույն կոմպոնենտը մնում է այն, թե ո՞վքեր են դասավանդում:

Մանկավարժականում որդեգրվել է այսպիսի սկզբունք ` հնարավորինս հրավիրում ենք աշխատանքի որակյալ, տվյալ ասպարեզում մեծ մասնագիտական հեղինակություն ունեցող անձանց.



Մենք գտնում ենք, որ մեծամասամբ լսարան պետք է մտնի մասնագիտության մեջ հեղինակությունը: Ժամանակակից համալսարանում մենք պետք է վերանանք թելադրությունից, երբ ամբիոնի մոտ կանգնած ուսանողին թելադրում են: Դա անցյալ է: Հիմա կենդանի, ինտերակտիվ մեթոդներն են աշխատում: Այսօրվա տեխնիկական հեղափոխության պայմաններում, երբ ամեն ինչ կարելի է ինտերնետում արագ գտնել, ավելի կենդանի մեթոդներ են պետք: Իսկ անձը, որը երկար տարիներ աշխատել է, եւ լավ է աշխատել, էսօր չի համապատասխանում օրվա պահանջին, պետք է նրան հնարավորություն տալ աճելու, անհատական մոտեցում է պետք: Համալսարանում 1700 աշխատակից կա, որից 900-ից ավելին դասախոսական կազմն է: Երկու տարի առաջ մեզ մոտ դասավանդում էր ԳԱԱ մեկ անդամ, հիմա՝ 17, որոնց թվում է ակադեմիկոս Գեւորգ Բրուտյանը: Շախմատի եւ սպորտի ամբիոնի վարիչ վերջերս ընտրվեց գրոսմայստեր Սմբատ Լպուտյանը: Էկոլոգիայի ամբիոնի վարիչ է ընտրվել Կարինե Դանիելյանը: Մարիամ Հարությունյանը ԳԱԱ-ից մեր ամենաերիտասարդ դոկտորն է՝ ինֆորմատիկայի գծով: Արմեն Էլբակյանը մեզ մոտ վերջերս ընտրվեց ռեժիսուրայի ամբիոնի վարիչ: Վահե Ստեփանյանը ընտրվեց իրավագիտության ամբիոնի վարիչ, Հենրիկ Հովհաննիսյանն է մեզ մոտ դասավանդում...

**- Իսկ երիտասարդ սերունդը կարողանո՞ւմ է նոր անուններ առաջ մղել ձեզ մոտ...**

- Մի օրինակ բերեմ՝ Կոջոյան Անին փայլուն ավարտել է Օքսֆորդի համալսարանի մագիստրատուրան, եկել էր, մենք անմիջապես վերցրեցինք, դասավանդելու է անգլիական գրականություն, եւ կանենք ամեն ինչ նման կադրերով համալրելու համար համալսարանը:

**- Շա՞տ եք ազատել դասախոսների...**

- Եղել են, ինձ համար դա շատ ծանր է, քանի որ համալսարանում 32-րդ տարին եմ աշխատում, իմ ամբողջ աշխատանքային գործունեությունը այս համալսարանի հետ է կապված, քսան տարի եղել եմ կուլտուրայի ֆակուլտետի դեկանը: Մանկավարժական համալսարանն իր բոլոր զարգացումների մեջ ես գիտեմ ավելի վաղ ժամանակից, որովհետեւ 50 տարի էլ իմ հայրն է այստեղ աշխատել: Բայց դառնալով ռեկտոր՝ ինձ համար շատ նոր բաներ էլ բացահայտվեցին, գուցե հիմա եմ մոլորությունների մեջ, դա էլ չի կարելի բացառել (կատակում է):

**- Դուք փոխվե՞լ եք ռեկտոր դառնալուց հետո:**

- Դժվար է այդ հարցին պատասխանել, բայց կարծում եմ, որ ինչ-որ ձեւով փոխված կլինեմ, որովհետեւ աշխատանքի ռիթմը ինչ-որ բան անպայման կփոխի. ինձ համար դա նկատելը դժվար է՝ կարծես թե նույնն եմ, դա ուրիշը պետք է նկատի:

**- Կարողանո՞ւմ եք աշխատակիցների հետ շփվել՝ ի վերջո մեկուկես հազարի չափ աշխատակից ունեք:**

- Գիտեք՝ ամենօրյա շփման մասին խոսք լինել չի կարող, բայց աշխատում եմ: Ես ունեմ ընդունելության օր՝ ամեն հինգշաբթի, եւ կարող է յուրաքանչյուր ոք գալ հանդիպման՝ դասախոս թե ուսանող: Եվ ամեն հինգշաբթի մի քանի տասնյակ հոգու լսում եմ:

**- Վերադառնանք Մանկավարժականի ծրագրերին:**

- Իսկապես շատ բան ենք փոխել եւ մի քանի անգամ ավելի շատ պետք է փոխենք: Կամ, այսպես ասենք, շատ բաներ պետք է զարգացում ապրեն. 13 հազարից ավելի ուսանող ունենք, որոնցից 1400-ն առաջին կուրսեցի են, 1255-ը առկա ուսուցում են անցնում, մոտ 100 հոգի մագիստրատուրայում առաջին կուրսում են եւ 1000-ի չափ՝ հեռակա ուսուցմամբ են սովորում: Ինչպես մյուս բուհերում՝ շատ նվազ են երկրորդ կուրսերը՝ կապված 12-ամյա կրթության հետեւանքով անցած տարի սակավ ընդունելության հետ:

Առաջին կուրսեցիները բացի հայերենից, ընտրում են մեկ օտար լեզու: Առաջ անցնում էին մեկ օտար լեզու եւ ռուսերեն անպայման: Պատկերացրեք՝ մեր երկրին 20 տարվա անկախություն էր պետք, որ մենք Մանկավարժական համալսարանում հասկանայինք, որ ռուսաց լեզուն օտար լեզու է: Մենք ռուսերենը դիտարկում ենք որպես օտար լեզու եւ առաջին կուրսեցուն առաջարկում ենք ընտրել մեկ օտար լեզու՝ նպատակ ունենալով, որ 4 տարում բացի հայերենից, հնարավորություն ունենան ազատորեն աշխատել եւս մեկ լեզվի հետ: Ուսանողները գիտեն, որ նրանք չեն ունենա ավարտական դիպլոմ, մինչեւ չբերեն միջազգային սերտեֆիկատ, եթե անգլերեն է՝ Toefl պետք է հանձնեն եւ այլն: Որովհետեւ ի՞նչ է տեղի ունեցել իրականության մեջ՝ ռուսերենը մոռացվել է, անգլերեն էլ չեն սովորել, եւ այսօր մեր ուսուցիչը, տնտեսագետը, մյուսները ավարտում են բարձրագույն ուսումնական հաստատություն՝ բացի հայերենից աշխատել չկարողանալով եւս մեկ լեզվով: Սա ենք ուղղում: Բարձր մակարդակի վրա ենք դրել որեւէ օտար լեզվով ուսուցումը, բացի դրանից երկու տարվա փոխարեն չորս տարի են սովորում օտար լեզուն: Իսկ առաջվա ֆիզկուլտուրայի ամբիոնը կոչվում է սպորտի եւ շախմատի: Այո, նաեւ շախմատ են սովորում ապագա մանկավարժները. Հայաստանի 1404 դպրոցից 400-ը ունի փոքրաթիվ՝ 100 աշակերտ, եւ ուսուցիչն այնտեղ դասավանդում է ինչ ասես: Մենք ձգտում ենք, որ ուսուցիչն այստեղ պատրաստ լինի բացի հիմնական առարկայից՝ մի քանի այլ առարկա եւս դասավանդելու: Դրանց մեջ նաեւ շախմատն է մտնում:

**- Գիտեմ՝ եվրոպական ծրագրերի եք մասնակցում՝ ի՞նչ ծրագրեր են:**

- Միայն այս տարի Մանկավարժական համալսարանը եվրոպական «Տեմպուսի» գծով երեք ծրագրի է մասնակցում (դրանք վերաբերում են կրթության կազմակերպմանը), եւ առաջին դեպքն է, որ երկու հաստատություն՝ Մանկավարժական եւ Տնտեսագիտական համալսարանները դարձել են բուհ-համակարգող: Առաջին ծրագրի բուհ-համակարգողը Մանկավարժականն է՝ մեկ միլիոն դոլար գումարի կարգի ծրագիր է, որին մասնակցությունը թույլ կտա, որ մենք մագիստրատուրայում բացենք այդ մասնագիտացումը (կրթության կազմակերպում), ու նաեւ ուսանողները խորանան այդ մասնագիտացման մեջ, դրանցից մի կիսամյակը՝ չորս ամիս կսովորեն Մեծ Բրիտանիայում: Դա, իհարկե, միայն մեր ուսանողներին չի վերաբերում: Բայց մագիստրատուրայի կազմակերպումը մեր բուհին է անելու, եւ առանց այդ էլ մեր բուհ ընդունվում են այլ տեղ բակալավրիատ անցած ուսանողներ:

«Տեմպուսի» ծրագրի շնորհանդեսը կլինի դեկտեմբեր ամսին: Բացի սրանից եւս երկու ծրագրերի ենք մասնակցում «Տեմպուսից»՝ բուհ-մասնակից ենք: Դրանք տարբեր մասնագիտական ուղղվածություններ ունեն, որտեղ համակարգող որպես հանդես են գալիս ուրիշները: Մեր՝ կրթության կազմակերպման համակարգող լինելու ծրագրով ուսումնական ծրագիր ենք մշակել կրթության արդյունավետ կազմակերպման վերաբերյալ, որը մենք կիրառում ենք, դա երեք տարվա ծրագիր է, ինչպես, ի դեպ, նաեւ մյուս երկուսը, որտեղ մենք մասնակից ենք:

Բացի դրանից հայտնի է, որ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի հետ ունենք կրթական բարեփոխումների ծրագիր, որն ուղղակիորեն վերաբերում է ուսումնական ծրագրերին: Ի դեպ՝ այդ ծրագիրը մեկուկես տարի գործում է, եւ պարբերաբար՝ չորս-հինգ անգամ իրենց պրոֆեսորների խումբը ժամանում է Հայաստան, աշխատում մեր ծրագրերի վրա: Փոփոխություններ նրանք առաջարկում են՝ հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները: Մերոնցից երկու խումբ արդեն գնացել է Ֆինլանդիա՝ շատ արդյունավետ է այս աշխատանքը:

**- Դո՞ւք եք նախաձեռնող այդ կապերում, թե՞ այլ գործոններ եւս կան, ընդհանրապես՝ նախաձեռնողականությունը կարեւո՞ր է այս համատեղ ծրագրերում:**

- Գիտեք, մենք պարզապես նորմալ աշխատում ենք, ձեւ չենք թափում, դա նորմալ է: Իմիջիայլոց՝ միջազգային կոնտակտների մեջ, ես դիտել եմ, ցավոք, ձեւականությունը շատ-շատ է: Գիտեք՝ ծաղկաձորյան էդ վոյաժները, անընդհատ սեմինարները, հանդիպման տարբեր ձեւերը, պսեւդեվրոպա-

կան թիթիզությունները, որոնք մեր կյանքի իրական զարգացման հետ ոչ մի ընդհանրություն չունեն... Ի սեր Աստծո, թող հավաքվեն ճաշեն եւ խելոք-խելոք ճառեր արտասանեն, մանավանդ Եվրոպաներում էլ այդպես է, այնտեղ շատ ավելի ահավոր է փողերի մսխման հարցը, եւ պատկերացրեք՝ դրանք գալիս մեզ մոտ են դասախոսություն կարդում:

**- Փող են լվանո՞ւմ:**

- Հա, ապրեք, ամբողջ աշխարհում է այդ, ու հետո գալիս այստեղ են դասախոսություն կարդում կոռուպցիայի դեմ պայքարի մասին: Մի առումով թերեւս բարոյական իրավունք ունեն՝ քանի որ այնտեղ կենսամակարդակը մեզանից անհամեմատ բարձր է: Բայց ինչ վերաբերում է բազում-բազում բյուրոկրատական եւ այլ կարգի դրսեւորումներին՝ մենք կարող ենք «սովորել եւ սովորում ենք»:

**- Իսկ գիտական մթնոլորտի փոփոխության մասին ի՞նչ կասեք:**

- Ժամանակակից համալսարանի սկզբունքն այն է, որ անպայման պետք է լինի հետազոտական: Այսինքն՝ բացի ուսումնական հաստատություն լինելուց՝ հաջող հաստատությունը պետք է լինի հետազոտական: Ամբողջ աշխարհում այդպես էր, մեզ մոտ՝ ոչ, քանի որ մենք ժառանգորդն ենք խորհրդային համակարգի, որտեղ գիտությունը զարգանում էր ակադեմիայի համակարգում, որոշ չափով միայն՝ համալսարաններում: Բայց դա սխալ եւ անարդյունավետ է, հիմա մանավանդ կա վճար ուսման համար, համալսարանների նյութական հնարավորություններն ավելի մեծ են: Գիտե՞ք, օրինակ, որ Մանկավարժական համալսարանում հիմա արհեստական բյուրեղներ ենք աճեցնում: Դա Եվրոպայում ճանաչված գիտնական, ֆիզիկոս Էդուարդ Կոկանյանի (որը մեզ մոտ ֆիզիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ է այժմ) համատեղ ծրագիրն է Ֆրանսիայի համապատասխան կենտրոնների եւ մեր Աշտարակի ֆիզիկայի ինստիտուտի հետ, ուսանողները գործնական գիտելիք են ստանում եւ դիտում ընթացքը, որը շատ օգտակար է:

**- Այսինքն՝ սա կոնկրետ օրինակ է աշխարհի հայտնի կենտրոնների հետ գիտական կապ ունենալո՞ւ:**

- Տեսեք՝ նոյեմբերի 19-ին օպտիկայի դասավանդման ուղղությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ միասին գիտաժողով ենք անցկացնելու, որը 70 տոկոսով այդ միջազգային կազմակերպությունն է ֆինանսավորում, 30 տոկոսով՝ մենք: Օպտիկայի դասավանդման ուղղությամբ համատեղ քննարկումներ են լինելու հինգ երկրներից ժամանող գիտնականների հետ: Բայց այս կարգի կապերը արհեստական չպետք է լինեն, պետք է լինի ճանաչում՝ ոչ թե հանուն ճանաչման, ոչ թե դա թիթիզություն լինի, այսպես խոսակցական բառով արտահայտվեմ, այլ գործնական արդյունքներ ունենան: Մնացած դեպքերում դա անիմաստ է:

**- Իսկ որո՞նք են Մանկավարժականի պրոբլեմները:**

- Օյ, պրոբլեմները շատ ավելին են, քան լուծված հարցերը: Կարճ ձեւակերպեմ՝ մենք պետք է հինգ-վեց տարուց հետո անցնենք միջազգային հավատարմագրում, դա ժամանակի հրամայականն է: Դա շատ բարդ է, ու բոլոր առումներով պետք է համալսարանը համապատասխանի միջազգային չափանիշներին: Իսկ դա նշանակում է ե՛ւ անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, հստակեցում մասնագիտությունների մեջ՝ մասնագիտական ուղղվածություն, ուսանողական եւ դասախոսական որակյալ կազմ, ե՛ւ շատ-շատ այլ բաներ: Ողջ թափով աշխատում ենք այդ ուղղությամբ: Ես հակահեղափոխական եմ: Ես չեմ ուզում փոխել, ես ուզում եմ, որ ամեն ինչ ունենա իր զարգացումը՝ զարգացման կողմնակից եմ: Իսկ եթե կա բացասական դրսեւորում՝ պետք է իմանալ դրա պատճառը, եւ էվոլյուցիոն ճանապարհով եւ հանգիստ այդ բացասական էներգիան պետք է վերացվի: Այս ճանապարհով պետք է գնանք: Ոչ թե մեր առաջ ցուցակ դնենք՝ ասենք սրանք անպետք մարդիկ են, եկեք 5 հարյուր հոգի կրճատենք, նրանց տեղը 5 հարյուր նոր մարդ ընդունենք: Կարող է այդ 5 հարյուր նորերը շատ ավելի վատ իրենց դրսեւորեն, քան եղածները: Բայց որ պետք է էվոլյուցիա լինի, այսօրվա դասախոսը պետք է հետաքրքրի ուսանողին, դա փաստ է:

Մի միտում կար Հայաստանում՝ մոդայիկ մասնագիտություններ, ընդ որում՝ հայ հերոսական ծնողը միշտ էլ այդ վճարը գտնում էր, տունը կծախեր՝ երեխային սովորելու կտար. վերջին երկու տարում այդ մասնագիտությունների գծով դիմողների թիվը քչացել է, սթափ մտածողությամբ եմ այդ երեւույթը բացատրում: Նոր մասնագիտություններ են սկսել մոդայիկ դառնալ մեզ մոտ: Ներառական կրթության պայմաններում, երբ հատուկ դպրոցները մեջտեղից դուրս են գալիս եւ երեխաները սովորելու են սովորական դպրոցում՝ ներառական կրթությունը շատ ակտուալ, կարեւոր ուղղություն է դարձել որպես մասնագիտություն եւ նրա պահանջարկը շատ է: Քանի որ մենք դպրոցական համակարգի վրա ենք աշխատում՝ շատ է ուսուցիչների պահանջարկը գյուղերում եւ մանավանդ՝ սահմանամերձ գյուղերում: Այսինքն մեզ մոտ շատ հաճախ ոչ թե մասնագիտական առումով է պահանջարկը, այլ դպրոցի աշխարհագրական տեղաբաշխման:

**- Իսկ հետադարձ կապ ունե՞ք եւ գիտե՞ք, թե Մանկավարժականի շրջանավարտների ո՞ր տոկոսն աշխատանքն ունի, ընդհանրապես հետագայում կարողանո՞ւմ են աշխատանք գտնել:**

- Գիտեք՝ դժվարությամբ, ինչպես ընդհանրապես Հայաստանում, այս ուղղությամբ բազմաթիվ, այսպես ասած, պրոբլեմներ կան: Բայց մենք անցած տարի մի որոշում կայացրինք, որը կիրառում ենք. սկսեցինք մեզնից՝ ուսումնաօժանդակ անձնակազմը ձեւավորվում է մրցույթով, կարծես թե դա ոչ մի ուրիշ տեղ չկա, հին լեզվով՝ լաբորանտին, հիմա՝ մասնագետ է կոչվում, մենք մրցույթով ենք ընդունում: Մենք հսկայական պահանջ ունենք օտար լեզվի դասախոսների, եւ ոչ մի մասնագիտության առումով էնքան չեն միջնորդում, որքան օտար լեզու եւ երաժշտություն դասավանդելու համար: Այդ մասնագետների գերարտադրություն է, բայց մեկ է, որակյալ մասնագետի կարիք կա: Իսկ մեզ հաճախ ասում են՝ գիտեք, նա գիտությունների թեկնածու է. թեկնածու... անգլերեն լիարժեք չիմանալով: Դրա համար համապատասխան սերտեֆիկատ կա՝ կբերի, երկու անգամ շատ աշխատավարձ կստանա:

**- Նորոգվում է Մանկավարժականը՝ ի՞նչ ռեսուրսով**

- Ներքին, միայն ներքին...

**Հարցազրույցը վարեց
ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**

# Հաջորդների հաշվեհարդարը շարունակվում է...

Վրաստանում հոկտեմբերի խորհրդարանական ընտրություններից շատ ժամանակ չի անցել, բայց երկրում կատարվող փոփոխությունները հետաքրքրական իրավիճակ են ստեղծել, երբ արդեն նախկին իշխանություն ներկայացնող երկրի նախագահին՝ Միխեիլ Սաակաշվիլու թիմակից ընկալվողների հանդեպ հաշվեհարդարը առավել աղաղակող ձեւեր ու կոպիտ դրսեւորումներ է ընդունում:

Սաակաշվիլու մի քանի մտերիմներ անմիջապես հեռացվեցին իրենց զբաղեցրած պաշտոններից, երբ Վրաստանի խորհրդարանական ընտրություններում հաղթած ուժը ներկայացնող միլիարդատեր Բիձինա Իվանիշվիլին զբաղեցրեց վարչապետի պաշտոնը: Ամեն դեպքում, ինքը՝ Սաակաշվիլին, դեռ շարունակում է մնալ նախագահ, այնպես, ինչպես Թբիլիսիի քաղաքապետ է մնում նրա մերձավորներից Գիգի Ուգուլավան: Բայց, ինչպես ասում են, վերջինիս էլ է հերթ հասնելու, քանի որ վրաց իրավապահների ձեռքերն արդեն հասել են նրա տեղակալին:

Վրացական լրատվամիջոցները տեղեկացնում են, որ նախորդ գիշերը խուզարկություն է տեղի ունեցել Ուգուլավայի տեղակալ, նույն օրը ցերեկը մի քանի ժամ հարցաքննությունից հետո ձերբակալված Շոթա Խիզանիշվիլու աշխատասենյակում: Ընդ որում, քաղաքապետարանի մամուլի խոսնակ Բաչո Դոլիձեի վկայությամբ, իրավապահները քաղաքապետարանում հայտնվել են առանց համապատասխան փաստաթղթերի եւ որպես խուզարկության արդյունք իրենց հետ տարել փոխքաղաքապետի համակարգչի պրոցեսորը:

Աշխատասենյակի խուզարկությունից հետո նմանօրինակ գործողություն տեղի է ունեցել նաեւ փոխքաղաքապետի տանը՝ ընտանիքի անդամների ներկայությամբ:

Քաղաքապետ Գիգի Ուգուլավան, իր տեղակալի ձերբակալությունից անմիջապես հետո, ընդհատել է իր երկօրյա այցը Հռոմ ու վերադարձել Վրաստան: Ամեն դեպքում, դժվար թե Ուգուլավայի ներկայությունը մայրաքաղաքում որեւէ կերպ օգնի իր տեղակալին, դրա փոխարեն ամենայն հավանականությամբ «եկել է» նաեւ Ուգուլավայի «հերթը»:

Եվ այս ամենի հետ մեկտեղ վրացական ներկայիս կառավարության անդամները հավակնում են հայտարարել, թե ուզում են մնալ այն յուրատեսակ օրինակը, որ առկա է Կովկասում, թեեւ հաջորդների հաշվեհարդարը նախորդների նկատմամբ հատուկ էր նաեւ Սաակաշվիլու կառավարությանը: Մյուս կողմից, դժվար թե նույն հաշվեհարդարային մոտեցումը չդրսեւորվի, ասենք, Հայաստանում, եթե նախագահական ընտրություններում հաղթի ընդդիմադիր թեկնածու, որի միասնական լինելը եւս նույնքան հարցական է, որքան հաղթանակը:

**Վ. Պ.**

# Ճապոնիայի խորհրդարանն արձակվեց



Ճապոնիայի խորհրդարանի ստորին պալատը երեկ արձակվել է մինչեւ դեկտեմբերի 16-ը, երբ պետք է անցկացվեն արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Խորհրդարանն արձակելու եւ նոր ընտրությունների օր նշանակելու որոշումը ընդունել է վարչապետ Յոսիհիկո Նոդան, պաշտոնապես ստացել է կայսր Ակիհիտոյի հաստատումը:

Վարչապետ Նոդան արտահերթ ընտրություններ նշանակել է ընդդիմության ճնշման ներքո: Պատճառը դժգոհությունն է կառավարող Դեմոկրատական կուսակցության քաղաքականությունից: Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ 2012-ի ամռան վերջերին վարչապետը խոստացել էր ընտրությունների օր նշանակել այն բանի դիմաց, որ ընդդիմությունը հանուն պետական պարտքի կրճատման պաշտպանի մինչեւ 2015 թ. վերջը վաճառքի հարկը կրկնապատկելու օրինագիծը:

Խորհրդարանում ընդդիմությանը ենթակա վերին պալատը երեկ նույն պայմաններով հաստատել է Դեմոկրատական կուսակցության եւս մեկ օրինագիծ, որը ենթադրում է պետական պարտատոմսերի թողարկում հանուն բյուջեի պակասորդի վերացման:

Հանրային կարծիքի հարցումների տվյալների համաձայն, դեկտեմբերյան ընտրություններում կհաղթի Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը, իսկ դրա առաջնորդ Սինգո Աբեն կդառնա վարչապետ: Նա վարչապետի պաշտոնն արդեն զբաղեցրել է 2006-2007թթ.: Սպասվում է, որ Աբեն կխստացնի քաղաքականությունը Չինաստանի նկատմամբ, որի հետ Ճապոնիան ունի տարածքային վեճեր:

# Խորվաթ գեներալների արդարացումը զայրացրել է Սերբիային



Սերբիայի փոխվարչապետ Ռասիմ Լյալիչը երեկ նախկին Հարավսլավիայի գործերով զբաղվող Միջազգային դատարանին մեղադրել է կանխակալության մեջ: Բելգրադը զայրացած է երկու խորվաթ գեներալների արդարացումից, որոնք ավելի վաղ դատապարտվել էին 1995-ին սերբերի դեմ կատարած ոճրագործությունների համար:

«Այդ որոշման պատճառով մենք կորցրինք հավատը դատարանի արդարության հանդեպ: Այսօրվա դատավճիռը արդարադատության ընտրովիության վկայությունն է: Դա նույնիսկ ավելի վատ է, քան անարդար դատը», հայտարարել է Լյալիչը:

Խորվաթ գեներալներ Անտե Գոտովինան եւ Մլադեն Մարկաչը 2011-ին դատապարտվել էին համապատասխանաբար 24 եւ 18 տարվա բանտարկության: Դատարանը նրանց մեղավոր էր ճանաչել Խորվաթիայի սերբ բնակչության դեմ բազմաթիվ հանցանքներ գործած լինելու մեջ: Հազարավոր էթնիկ սերբեր սպանվեցին եւ արտաքսվեցին խռովարար Սերբական Կրաինայի դեմ խորվաթական զորքերի «Փոթորիկ» գործողության ժամանակ: Գործողությունը ղեկավարում էին գեներալներ Գոտովինան եւ Մարկաչը:

Առաջին դատավճռի հրապարակումից հետո դատապարտյալները գանգատարկել էին վճիռը: Ի վերջո դատարանը եզրակացրել էր, որ գեներալները չեն կարող պատասխանատվություն կրել իրենց ենթակաների հանցագործությունների համար:

# Մանկավարժական համալսարանի առօրյան



Մանկավարժի մասնագիտությունը բոլոր ժամանակներում եղել եւ մնում է ամենապատասխանատուներից մեկը: Մանկավարժական համալսարանը Հայաստանի խոշորագույն բուհերից է, որը տարեկան ունենում է մոտ 3000 շրջանավարտ: Այստեղ սովորում է ավելի քան 13 000 ուսանող: Եվ պատահական չէ, որ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը գտնվում է կառավարության մշտական հոգածության ներքո:

Արդեն երկու տարի հանրապետության վարչապետ Տիգրան Սարգսյանը հայկական պետական մանկավարժական համալսարանի խորհրդի նախագահն է:

Համալսարանն այդ ընթացքում իրականացրել է բազմաթիվ ծրագրեր, որոնք միտված են ինչպես ուսուցման մակարդակի բարձրացմանը, այնպես էլ ուսանողների առօրյան ավելի հետաքրքիր եւ բովանդակալից դարձնելուն:

Անցած 2 տարում Մանկավարժական համալսարանում դասախոսություններ են կարդացել հանրապետությունում եւ արտերկրում լայն ճանաչում ունեցող մասնագետներ. այնպիսիք, ինչպիսիք են քաղաքագիտության դոկտոր Անդրանիկ Միհրանյանը, սփյուռքահայ հրատարակախոս, գրող, ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ Երվանդ Ազատյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, Միչիգանի համալսարանի պրոֆեսոր Գեւորգ Բարդակչյանը, սփյուռքահայ հասարակական գործիչ, խմբագիր Ժիրայր Դանիելյանը, գրող, հրապարակախոս, հայազգի Կիմ Բակչին, Ֆլորիդայի կենտրոնական համալսարանի պրոֆեսոր, միջազգային օպտիկայի հանձնաժողովի քարտուղար Անժելա Գուզմանը, անվանի լեզվաբան, արեւելյան լեզուների ու մշակույթի մասնագետ Ջավեն Եկավյանը, ռուսաստանաբնակ հայ մտավորական, բարերար, «AVA Group of Companies Oil & Gas Projects»-ի նախագահ Վլադիմիր Հարությունյանը:

Մանկավարժական համալսարանի հրավերով մեր ուսանողների եւ պրոֆեսորադասախոսական կազմի համար դասախոսություններ են կարդացել Աթենքի համալսարանի պատվավոր ռեկտոր, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ, արդի ժամանակաշրջանի խոշորագույն փիլիսոփա, ակադեմիկոս Եվանգելոս Մոութսոպոուլոսը, Ինսբրուքի համալսարանի փիլիսոփայության բաժանմունքի ղեկավար, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ Հանս Կոխլերը, Փիլիսոփայական ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (FISP) նախագահ, ակադեմիկոս Պիտեր Կեմպը, Հոգեբանության եւ իրավունքի եվրոպական ընկերակցության նախագահ Դեյվիդ Կուկը:



*Մագիստրոսները հրաժեշտ են տալիս:*

Եվ բոլոր այս հյուրերը Երեւան են եկել հատուկ Մանկավարժական համալսարանի հրավերով:

Մանկավարժական համալսարանը հյուրընկալեց Ամերիկայի Միացյալ Նահանգների «Կազմակերպությունների ազգային էթնիկական կոալիցիայի» (ԿԱԷԿ-NECO) նախագահ Նասեր Կազեմիին: Բարձրաստիճան հյուրը Հայաստանում հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին երկրորդի եւ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ: Եվ ուսումնական հաստատություններից միակը, ուր այցելեց Նասեր Կազեմին՝ հայկական պետական մանկավարժական համալսարանն էր: Նրան ընդունեց համալսարանի փողային նվագախումբը, ապա համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը Նասեր Կազեմիին շնորհեց Մանկավարժական համալսարանի Պատվավոր դոկտորի կոչում: Պատվավոր հյուրը հայ ուսանողներին, պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացրեց ամերիկյան երազանքին հասնելու իր գաղտնիքը: Իսկ հայկական պարը տեսնելով՝ եզրակացրեց, դուք կարող եք աշխարհը գրավել ձեր պարով:

Մեր համալսարանը համագործակցության պայմանագիր է կնքել միջազգային ճանաչում ունեցող եւ մանկավարժական կադրեր պատրաստող Եվրոպայի լավագույն համալսարաններից մեկի՝ Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի հետ: Ֆին 10 պրոֆեսորներ մինչեւ 2013 թվականը կաշխատեն մանկավարժական համալսարանի իրենց գործընկերների հետ: Նրանք մշակում եւ կատարելագործում են ուսումնական ծրագրերը՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին: Արդեն տեղի են ունեցել մի քանի փոխայցելություններ՝ փորձի փոխանակման նպատակով:

Մանկավարժական համալսարանն այսուհետ աճեցնում է արհեստական բյուրեղներ: ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ»-ի եւ Մանկավարժականի միջեւ կնքվեց պայմանագիր՝ համատեղ գիտաուսումնական «Ոչ գծային օպտիկական, լազերային եւ ֆոտոնիկական բյուրեղների լաբորատորիայի» ստեղծման մասին: Մեր համատեղ աշխատանքի արդյունքն արդեն տեսանելի եւ շոշափելի է: Անդրանիկ բյուրեղը պատրաստ է:

Մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժություն ուսումնասիրող ուսանողներն այսուհետ հնարավորություն ունեն ծանոթանալ դելֆինաթերապիայի գաղտնիքներին եւ տիրապետել դելֆինների օգնությամբ արատ ունեցող երեխաների թերությունների շտկման մեթոդներին:

Երկու տարում համալսարանը կազմակերպեց բազմաթիվ գիտաժողովներ, ցուցահանդեսներ, համերգային ծրագրեր, մանկավարժական համալսարանում հանդես եկավ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ Էդվարդ Թոփչյանի նվագավարությամբ, համալսարանի երկսեռ երգչախումբը պատիվ ունեցավ երգել Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ, դասական երաժշտության համերգներ եւ ամերիկյան հայտնի ֆիլմերի սաունդթրեկները ներկայացրեց Հայաստանի երիտասարդական նվագախումբը՝ Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ:

Նշանավոր Գարրի Քյոսայանի ջազ քառյակը գործում է մանկավարժական համալսարանի կազմում:

Մանկավարժականում հյուրընկալվեց Թբիլիսիի Իվան Ջավախաշվիլու անվան պետական համալսարանի պարային կոլեկտիվը՝ Վրաստանի ժողովրդական արտիստ Թենգիզ Քուրաշվիլու ղեկավարությամբ:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը իր հիմնադրման 90-ամյակի կապակցությամբ կազմակերպեց բացառիկ գիտաժողով՝ նվիրված փիլիսոփայության արդի զարգացումներին: Երկօրյա գիտաժողովը Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական եւ գործնական հիմնախնդիրներ (փիլիսոփայական եւ հոգեբանական տեսանկյուններ)՝ թեմայով էր: Գիտաժողովին մասնակցում էին աշխարհահռչակ ակադեմիկոսներ, խոշոր գիտնականներ Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Ավստրիայից, Դանիայից, Բելգիայից, Ֆինլանդիայից, Արգենտինայից, Չեխիայից, Հունաստանից, Ռուսաստանից, Վրաստանից:

Ֆրանկոֆոնիայի շրջանակում անցկացվեց «Միջմշակութային հաղորդակցությունը օտար լեզուների ուսուցման միջոցով» միջազգային գիտաժողովը, որին մասնակցում էին նաեւ արտասահմանյան հյուրեր՝ հատուկ դասախոսությամբ հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ-ի սոցիալական կրթության ակադեմիայի անդամ Վիկտորիա Սաֆոնովան:

Մանկավարժական համալսարանն այս տարիների ընթացքում ակտիվ համագործակցել է պաշտպանության նախարարության հետ, եւ ի թիվս բազմապիսի միջոցառումների, այս տարի նաեւ իրականացրեց կառավարության փորձնական ծրագիրը, որի շրջանակներում մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը գնահատեց Զինծառայողի կրթական կարիքները եւ ըստ այդմ վերապատրաստեց զինծառայողներին: Ծրագրի նպատակն էր զինծառայողների ծառայության վերջին ամիսների ընթացքում մասնագիտական հմտությունների եւ առանձին ուսումնական առարկաների գծով գիտելիքների զարգացումն ու նրանց նախապատրաստումը՝ ՀՀ բուհերում, նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու համար:

Ծրագիրն ավարտվեց հաջողությամբ, եւ այն կլինի շարունակական:

Անցնող ժամանակահատվածում իր ակտիվությամբ աչքի ընկավ ուսանողական խորհուրդը. Այն գործուն մասնակցություն է ունենում բոլոր համապետական միջոցառումներին, այդ թվում նաեւ ինքնուրույն նախաձեռնում: Մանկավարժականի ուսանողները մասնակցում են նաեւ տարբեր հումանիտար ակցիաների՝ օրինակ, ամեն տարի անցկացվող արյունատվության ակցիային:

Մանկավարժական համալսարանի շրջանավարտների հուշերում այնուամենայնիվ անմոռաց կմնա դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը 2011 թվականին: Շրջանավարտներից լավագույն 10-ը ավարտական վկայականները ստացան անձամբ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի ձեռքից: Որից հետո շրջանավարտներն ունկնդրեցին Հայաստանի պետական կամերային նվագախմբի բացօթյա համերգը: Այն եզրափակվեց շքեղ հրավառությամբ:

2011 թվականի մագիստրոսներին դիպլոմներ հանձնեց ՀՀ վարչապետ եւ մանկավարժական համալսարանի խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Ամառային հանգիստն ու միաժամանակ ուսումնական պրակտիկան ուսանողներն անցկացնում են Մանկավարժական համալսարանի Աղավնաձորում գտնվող հանգստյան տանը:

Մանկավարժականը խրախուսում է իր լավագույն ուսանողներին. 2010 թվականի լավագույն ուսանող ճանաչված Տաթեւիկ Ենոքյանին Մանկավարժական համալսարանի ղեկավարությունը պարգեւատրեց երկշաբաթյա ուղեւորությամբ՝ Փարիզ, իսկ 2011 թվականի լավագույն ուսանողուհին՝ Սառա Վանյանը կմեկնի Լոնդոն՝ ուսումնական երկշաբաթյա ծրագրով: Նա այս մասին իմացավ ուսանողի օրվա կապակցությամբ Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կազմակերպված միջոցառման ժամանակ: Մեր համալսարանի 2011 թվականի լավագույն 10 ուսանողները համալսարանի խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանի որոշմամբ երկշաբաթյա հանգիստ անցկացրին Կարմիր ծովի ափին՝ Շառմ Էլ Շեյխ հանգստի գոտում:

Մանկավարժական համալսարանն անում է ամեն ինչ, որպեսզի իր ուսանողը լիարժեք կրթություն ստանա, եւ միաժամանակ առօրյան հետաքրքիր անցկացնի համալսարանի պատերի ներսում: Այստեղ գործում է տեխնիկապես հագեցած, ժամանակակից գրադարան, համալսարանն ունի աստղադիտակ, որը Հայաստանում երկրորդն է Բյուրականի աստղադիտարանից հետո:

Բարձրագույն կրթությունը միայն գիտելիք չէ, որ տրվում է բուհում, ուսանողական կյանքն էլ միայն ուսում չէ: Ուսանողական կյանքն ամբողջանում է նման միջոցառումներով, որոնք ոչ միայն հաղորդում են յուրահատուկ շունչ, այլեւ նպաստում են ստեղծագործ անհատի աշխարհայացքի ձեւավորմանը:

## Պատմությունը

**20-րդ դարասկզբին, 1924 թվականին, Հայաստանի բնակչության 30 տոկոսն էր միայն գրագետ՝ 1000 բնակչից միայն 297-ը: Ժողովրդական կրթության վիճակը արմատապես բարեփոխելու եւ զարգացնելու համար խորհրդային կառավարությունը ձեռնամուխ եղավ դպրոցների համար մանկավարժական կադրեր պատրաստելու կարեւորագույն եւ անհետաձգելի գործին. բարձրորակ ուսուցչական կադրերի ստեղծումը դարձավ ժամանակի հրամայականը:**



*Մանկավարժականի նախկին շենքը՝ նախկին Հռիփսիմյան գիմնազիան:*

**Հայկական դպրոցները բարձրագույն կրթությամբ որակյալ ուսուցչական կադրերով ապահովելու խնդրի իրականացումը դրվեց 1920 թվականին հիմնադրված Երեւանի պետական համալսարանի վրա: 1921թվականի հոկտեմբերին բացվեց Համալսարանի մանկավարժության ֆակուլտետը, որի դեկան նշանակվեց ականավոր մանկավարժ եւ հոգեբան Գուրգեն Էդիլյանը:**

**Սակայն շատ կարճ ժամանակահատվածում պարզ դարձավ, որ միայն Երեւանի պետական համալսարանի մանկավարժական ֆակուլտետի ուժերով հնարավոր չէ բավարարել ուսուցչական կադրերի պատրաստման պահանջը, եւ 1922թ. սեպտեմբերի 30-ին որոշվեց այդ ֆակուլտետի հիմքի վրա բացել ինքնուրույն մանկավարժական ինստիտուտ՝ եռամյա դասընթացով:**

**1922 թ. նոյեմբերի 7-ին Երեւանում ծնունդ առավ Հայկական պետական մանկավարժական ինստիտուտը՝ վաստակաշատ մանկավարժ Արշավիր Շավարշյանի ղեկավարությամբ:**

**Նորաստեղծ բուհն ուներ միայն մանկավարժական ֆակուլտետ՝ նախադպրոցական, դպրոցական եւ արտադպրոցական մասնագիտություններով: Պարապմունքները սկսվեցին նոյեմբերի 27-ից, նախկին Հռիփսիմյան գիմնազիայի շենքում:**

**1924-25 ուսումնական տարում հայկական մանկավարժական ինստիտուտը ունեցավ իր առաջին շրջանավարտները:**

**Բուհում աշխատում էին ականավոր գիտնականներ ու հմուտ մանկավարժներ Հակոբ Մանանդյանը, Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Արսեն Տերտերյանը, Աշոտ Տեր-Մկրտչյանը, Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, Հայկ Ազատյանը, Գրիգոր Չուբարը, Ավետիք Տեր-Պողոսյանը, Արսեն Բեջանյանը, Տիգրան Ռաշմաճյանը, Հովհաննես Տեր-Միրաքյանը, Գրիգոր Ղափանցյանը, Ստեփան Ներսիսյանը, Վահան Ռշտունին եւ շատ ուրիշներ:**

**Հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի մահվան 100-ամյա տարեդարձի առթիվ 1948 թ.Մանկավարժական ինստիտուտը կոչվեց նրա անունով ու մինչեւ այժմ էլ կրում է մեծ մանկավարժի անունը:**

**Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության որոշմամբ 2000թ-ի հունվարից մանկավարժական ինստիտուտը վերանվանվեց Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան:**

# 5 հայ շախմատիստներ հավակնում են մեդալների

Սլովենիայում ընթացող շախմատի աշխարհի պատանեկան առաջնության 8-րդ տուրում մինչեւ 10 տարեկանների մրցաշարին մասնակցող Շանթ Սարգսյանը սեւերով հաղթելով ղազախ Ռամազան Ժալմախանովին, վաստակեց 6,5 միավոր: Այս արդյունքով նա ընթանում է 4-րդ տեղում: Առաջատարը վիետնամցի ՖԻԴԵ-ի վարպետ Ան Նգուենն է, որը 8-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: Նրան մեկ միավոր է զիջում ուկրաինացի Վիկտոր Մատվիշենը: Տարիֆային այս խմբում հանդես եկող Արթուր Դավթյանը վաստակել է 5 միավոր: Նա ոչ-ոքի խաղաց Դմիտրի Լազարդեի հետ:



Մինչեւ 18 տարեկանների մրցաշարում 6 միավորով առաջատարների խմբում է Կարեն Գրիգորյանը: Նա հաղթեց Խրիստոֆ Սոչացկուն: Տուրն անհաջող էր Հովհաննես Գաբուզյանի համար, որը պարտվեց Վլադիմիր Ֆեդոսեեւին: Գաբուզյանն ունի 5,5 միավոր եւ ընթանում է 14-րդ տեղում: Պարտություն կրեց նաեւ Տիգրան Ս. Պետրոսյանը՝ զիջելով Ֆեդերիկո Բոսկոլոյին: Տիգրանը վաստակել է 4 միավոր:

7 միավորով աղյուսակը գլխավորում է լեհ Դարիուշ Շվարցը, որը պարտության մատնեց Դավիթ Անտոնին: Նրան կես միավոր է զիջում Վլադիմիր Ֆեդոսեեւը:

Մինչեւ 16 տարեկանների մրցաշարի հայ մասնակիցներից լավագույնը Տիգրան Հարությունյանի արդյունքն է, որն ունի 6 միավոր: Տիգրանը հաշտություն կնքեց Կիրիլ Ալեքսեենկոյի հետ: Հայ շախմատիստը 1 միավորով է հետ մնում աղյուսակը գլխավորող ռուսաստանցի Ուրի Ելիսեեւից, որը ոչ-ոքի խաղաց Մաքսիմ Չիգաեւի հետ:

Մինչեւ 12 տարեկանների մրցաշարում Հայկ Մարտիրոսյանը հաղթելով Արաս Թահիբազին, վաստակեց 6 միավոր: Նույնքան արդյունք ունեն եւս 14 շախմատիստներ, որոնք հետապնդում են 7-ական միավոր վաստակած Կամերոն Վելերին եւ Աբիմանի Պուրանիկին:

Մինչեւ 14 տարեկանների մրցաշարում էլ 6 միավոր ունի Մանուել Պետրոսյանը, որը 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: 8-րդ տուրում նա պարտության մատնեց Էնդրյու Հորթոնին: Մանուելն էլ ընդամենը մեկ միավոր է զիջում աղյուսակը գլխավորող Բիլել Բելաչեթին ու Չիթամբարամ Արավինդին:

Հայ շախմատիստուհիներից առավել հաջող են հանդես գալիս Մարիա Գեւորգյանը (մինչեւ 18 տ.), Սուսաննա Գաբոյանը (մինչեւ 16 տ.) եւ Սիրանուշ Ղուկասյանը (մինչեւ 14 տ.), որոնք վաստակել են 5-ական միավոր: Առաջին երկուսը 8-րդ տուրում հաղթանակներ տոնեցին, իսկ Ղուկասյանը ոչ-ոքի խաղաց:

# Դրամատիկ իրադարձություններ վերջնագծում




Ֆիզկուլտուրայի ինստիտուտի մարզադահլիճում իրենց մրցավեճն ավարտեցին մինչեւ 15 տարեկան հանդբոլիստները, որոնք վիճարկեցին հանրապետության չեմպիոնի տիտղոսը: Առաջնության պարգեւների համար մրցապարտեզ էին դուրս եկել 6 թիմեր:

Չեմպիոնի տիտղոսի համար համառ պայքար ընթացավ Վանաձորի եւ Աջափնյակի հավաքականների միջեւ: Հենց նրանց միջեւ մրցաշարի վերջին օրը կայացած մրցախաղում էլ որոշվեց հանրապետության չեմպիոնը: Վճռորոշ մրցախաղին 2 թիմերն էլ ներկայացել էին 4-ական հաղթանակ տոնած:

Առաջին խաղակեսում ավելի ակտիվ էին վանաձորցիները, որոնք 2 գնդակի առավելությամբ (14-12) գնացին հանգստի: Ընդմիջումից հետո նրանք թուլացրին զգոնությունը, որի արդյունքում Աջափնյակի թիմը հաշվի մեջ առաջ անցավ: Սակայն ի վերջո վանաձորցիներին հաջողվեց հավասարեցնել հաշիվը՝ 22-22: Այս արդյունքը ձեռնտու էր Վանաձորի հավաքականին, որը խփած եւ բաց թողած գնդակների ավելի լավ տարբերությամբ նվաճեց Հայաստանի չեմպիոնի տիտղոսը:

Դրամատիկ իրադարձություններ ծավալվեցին նաեւ 3-րդ տեղի համար կայացած Ալավերդի-ՀՄԴ մրցախաղում: Հանրապետության նախորդ տարվա չեմպիոն Ալավերդու թիմն առաջին խաղակեսում հայտնվել էր հետապնդողի դերում՝ 15-18: Հետագայում էլ հաշվի մեջ առջեւից էին ընթանում հանդբոլի մասնագիտացված մարզադպրոցի հանդբոլիստները: Սակայն խաղավերջում ալավերդցիներին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը՝ 35-35: Ալավերդու թիմը 5 միավորով զբաղեցրեց 3-րդ տեղը, իսկ ՀՄԴ-ի հանդբոլիստները 3 միավորով բավարարվեցին 5-րդ տեղով:

Մրցաշարի փակման արարողության ժամանակ մրցանակակիրները պարգեւատրվեցին մեդալներով ու պատվոգրերով: Հատուկ մրցանակներ հանձնվեցին նաեւ առաջնության լավագույն խաղացող Հրաչյա Մարգարյանին (Ալավերդի) եւ լավագույն դարպասապահ Նարեկ Մելիքյանին (Վանաձոր):

# Երեւանում շախմատի նոր ակադեմիա կկառուցվի

ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովը շախմատի աշխարհի կանանց առաջնության պաշտոնական կայքին տված հարցազրույցում տեղեկացրել է, որ 2013-ի հունվարին Հայաստանում նախատեսված է կազմակերպության նախագահական խորհրդի նիստը: Այդ ժամանակ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ Իլյումժինովը Երեւանի կենտրոնում կդնեն նոր կառուցվելիք շախմատի ակադեմիայի հիմնաքարը:

ՖԻԴԵ-ի նախագահը նաեւ նշել է, որ մտադրություն ունի տարբեր երկրների միմյանց դեմ հանել, բայց իհարկե, շախմատում: Օրինակ՝ Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի, Ուկրաինան ընդդեմ Ռուսաստանի, ԱՄՆ-ն ընդդեմ Ռուսաստանի: Ըստ Իլյումժինովի, մտադրություն կա այդ երկրների միջեւ շախմատային մրցաշար կազմակերպել բջջային հեռախոսներով: Յուրաքանչյուր կողմ քայլի համար կունենա մի քանի րոպե, իսկ համակարգիչը կընտրի այն քայլը, որը բոլորից հաճախ նշված կլինի: Նման մրցաշարի միջոցով հնարավոր կլինի որոշել տվյալ ազգի միջին ինտելեկտը:

Իլյումժինովը նշել է, որ երբ այդ մտահղացումը քննարկել է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հետ, նրանցից մեկը հարցրել է. «Իսկ եթե մենք պարտվենք, կստացվի որ ավելի անխե՞լք ենք»: Բնականաբար, երկու նախագահներն էլ հրաժարվել են նման մրցաշարի կազմակերպումից:



# Լիլիթ Մկրտչյանն էլ լքեց մրցաշարը

**Խանտի Մանսիյսկում ընթացող շախմատի աշխարհի կանանց առաջնության 2-րդ փուլում Լիլիթ Մկրտչյանն էլ անհաջողության մատնվեց ու լքեց մրցաշարը: Նադեժդա Կոսինցեւայի հետ արագ շախմատի լրացուցիչ մրցախաղում Լիլիթն առաջին պարտիայում հաղթեց, հետո 2 անընդմեջ պարտություն կրեց, իսկ 4-րդ պարտիան ավարտեց ոչ-ոքի:**

**Մեծ անակնկալ գրանցվեց Հոու Յիֆանի եւ Մոնիկա Սոչկոյի մրցախաղում: Աշխարհի չեմպիոնուհին արագ շախմատի լրացուցիչ 2 պարտիաներում էլ զիջեց մրցակցուհուն եւ վայր դրեց իր լիազորությունները:**

# Պետրոսյանն ու Անդրեասյանը կիսեցին միավորները

**Արաբական Միացյալ Էմիրությունների Ֆուջեյրա քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 3-րդ տուրում մեր 2 շախմատիստներն էլ հաշտություն կնքեցին մրցակիցների հետ: Տիգրան Պետրոսյանը ոչ-ոքի խաղաց թուրք Դրագան Սոլակի հետ, իսկ Զավեն Անդրեասյանը միավորը կիսեց ուկրաինացի Յուրի Կրիվորուչկոյի հետ պարտիայում:**

**3 տուրից հետո հայ շախմատիստները վաստակել են 2-ական միավոր: Առաջատարը հնդիկ գրոսմայստեր Սուրիա Գանգուլին է, որը 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: Նրա մրցակիցն ուկրաինացի գրոսմայստեր Յարոսլավ Ժերեբուխն էր: Առաջատարից կեսական միավորով հետ են մնում Բայադուր Ջոբավան, Անդրեյ Սումեցը, Էլթաջ Սաֆարլին, Ալեքսանդր Մոիսեենկոն, Սերգեյ Ֆեդորչուկն ու Վլադիսլավ Տկաչովը:**

# Ճապոնացի մարզիկի ինքնատիպ ռեկորդը

**Ճապոնացի Կենիչի Իտոն Տոկիոյում ինքնատիպ ռեկորդ է սահմանել, որը կգրանցվի Գինեսի ռեկորդների գրքում: Նա չորեքթաթ վազքով 100 մետրը հաղթահարել է 17,47 վայրկյանում:**

**Իտոն վազքի սեփական ոճն ունի: Ճապոնիայում նրան «մարդ-կապիկ» են անվանում: Նրա վազքի տեխնիկան նման է Սենեգալում բնակվող աֆրիկական կարմիր կապիկների տեղաշարժմանը:**

**Համեմատության համար նշենք, որ 100 մետր արագավազքի համաշխարհային ռեկորդը պատկանում է ճամայկացի Ուսեյն Բոլտին եւ հավասար է 9,58 վրկ:**

# Իբրահիմովիչի գոլը չի հավակնի տարվա ամենագեղեցիկ գոլի մրցանակին

**Ֆուտբոլասերների, լրագրողների եւ մարզիչների համընդհանուր կարծիքով Անգլիայի հավաքականի դարպասը Զլատան Իբրահիմովիչի խփած ֆանտաստիկ գոլը ֆուտբոլի պատմության մեջ ամենագեղեցիկն էր: Նույնիսկ շվեդ լրագրողները, որ խաղից առաջ խստորեն քննադատել էին Իբրահիմովիչին, հանդիպումից հետո իրենց հոդվածներում հիացական խոսքեր էին ուղղել Շվեդիայի հավաքականի ավագի հասցեին: Անգլիացի լրագրողներն էլ գրել էին, որ շվեդ ֆուտբոլիստը նոր պատկերացում տվեց մարդկային հնարավորությունների մասին:**

**«Երբ անգլիացիների դեմ ես խաղում, մշտապես այդպես է ստացվում: Եթե քեզ հաջողվում է գրավել նրանց դարպասը, ապա անմիջապես լավ ֆուտբոլիստ ես դառնում: Հիշում եմ, թե Մեսիի մասին ինչեր էին ասում 2009-ի չեմպիոնների լիգայի եզրափակիչի նախօրեին: Սակայն նա գրավեց «Մանչեսթեր Յունայթեդի» դարպասը եւ անմիջապես դարձավ աշխարհի լավագույն ֆուտբոլիստ: Հնարավոր է, որ նման բան ասեն նաեւ իմ մասին», նշել էր Իբրահիմովիչը խաղից հետո:**

**Սակայն որքան էլ որ Իբրահիմովիչի գոլը գեղեցիկ ու տպավորիչ էր, սակայն այն չի կարող հավակնել 2012-ի ամենագեղեցիկ գոլի համար սահմանված Ֆերենց Պուշկաշի անվան մրցանակին: Բանն այն է, որ հենց անգլիացիների հետ խաղի օրը ՖԻՖԱ-ն արդեն հրապարակել էր 10 հավակնորդների ազգանունները: Եվ քանի որ քվեարկությունը վաղուց սկսված է, ՖԻՖԱ-ն որոշել է Իբրահիմովիչի գոլն ընդգրկել հաջորդ տարվա մրցանակաբաշխությունում:**

# Ռիկի Հատոնը ռինգ կվերադառնա նոյեմբերի 24-ին



**34-ամյա բրիտանացի բռնցքամարտիկ Ռիկի Հատոնը 3-ամյա ընդմիջումից հետո կրկին ռինգ դուրս կգա: Նոյեմբերի 24-ին Մանչեսթրում նա կմենամարտի կիսամիջինքաշային կարգում աշխարհի նախկին չեմպիոն Վյաչեսլավ Սենչենկոյի հետ: Ռիկի Հատոնը բռնցքամարտին հրաժեշտ էր տվել 2009-ին, երբ նոկաուտի էր ենթարկվել Մենի Պակյաոյի հետ մենամարտում: Նա նշել է, որ այդ պարտությունը ծանր հոգեբանական հետեւանքներ է ունեցել իր համար: Սակայն հետագա տարիներին բժիշկների, ինչպես նաեւ հարազատների ու մտերիմների շնորհիվ կարողացել է հաղթահարել դժվարությունները, կրկին իր ուժերի նկատմամբ վստահություն է ձեռք բերել, ինչն էլ նրան դրդել է կրկին ռինգ վերադառնալ:**

**«Ես չեմ ցանկանում 4 կամ 6-ռաունդանոց մենամարտեր անցկացնել: Ցանկանում եմ պայքարել աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար: Իմ վերադարձը հանուն փողի չէ: Չեմ ցանկանում մարզական կարիերաս ավարտել ծանր պարտությամբ, որը ստիպեց ինձ հեռանալ սպորտից», նշել է Ռիկի Հատոնը:**

**Հարկ է նշել, որ Ռիկի Հատոնը բնավ էլ չի կորցրել իր բարձր հեղինակությունը: Ուստի զարմանալի չէ, որ միջինքաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոն Պոլ Մալինյաջիի պրոմոութերներն արդեն մտադրվել են հաջորդ տարվա մարտին Հատոնի հետ մենամարտ անցկացնել: 2008-ին Հատոնը տեխնիկական նոկաուտով հաղթել էր Մալինյաջիին: Այնպես որ վերջինս ռեւանշի հասնելու հնարավորություն կունենա:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# ՎիվաՍել-ՄՏՍ-ի ցանցում գործարկվել է ինտերնետի DNS դոմենների անվանումների ներքին տիրույթային (L-Root) սերվեր

Ընկերության ցանցում L-Root սերվերի գործարկում իրականացնելուց հետո, ՎիվաՍել-ՄՏՍ-ի՝ տվյալների փոխանցման ծառայություններից օգտվող բաժանորդները դոմեն անվանումների տիրույթում որոնման արդյունավետության զգալի առավելություն են ձեռք բերել:

DNS-ը՝դոմենային անվանումների համակարգը, համացանցի համար յուրօրինակ «հեռախոսագիրք»-է: Հայկական ինտերնետ թրաֆիկի փոխանակման Արմիքս (ARMIX) կազմակերպությանն անդամակցելու շնորհիվ, ՎիվաՍել-ՄՏՍ-ը ձեռք է բերել այս համակարգից օգտվելու հնարավորություն:

Հայաստանը տարածաշրջանի սակավաթիվ այն երկրների շարքում է, որոնց հասանելի է այս կարեւոր ծառայության տեղական «պատճեն»-ը: Ինտերնետային L-Root սերվերները պարունակում են վերին մակարդակի դոմենային անուններ, ինչպիսիք են՝ «.com», «.org», «.net», եւ «.info»:

Ինտերնետ ներքին տիրույթային սերվերի առկայությունը ինտերնետից օգտվողներին ընձեռում է մի քանի առավելություն: Մասնավորապես՝այն հնարավորություն է տալիս մոտ տասն անգամ արագացնել DNS հարցումներին արձագանքումը՝ բարձրացնելով ծառայության արագությունն ու կայունությունը թե՛ լոկալ հատվածում, եւ թե՛ ամբողջ երկրի տարածքում:

Համացանցից օգտվողներին ընձեռված հիմնական առավելությունն այն է, որ դոմենային անվանումների որոնումը կարող է շարունակվել անգամ այն դեպքում, երբ միջազգային միացումն ընդհատվում է:

«Սա կարեւոր եւ շրջադարձային իրադարձություն է եւ՛ ՎիվաՍել-ՄՏՍ-ի, եւ՛, առհասարակ, Հայաստանի համար՝ ինտերնետ համացանցային ծառայությունների մատուցման որակի բարձրացման առումով: Այս սերվերի շահագործումը համահունչ է Հայաստանում գիտելիքահեն տնտեսության ստեղծմանը նպաստելու՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի ռազմավարությանը», - նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**: «Լոկալ DNS տիրույթային սերվերի ստեղծումը ինտերնետի կիրառումը խթանելու եւ Հայաստանում տեխնոլոգիաների սեկտորի զարգացմանն աջակցելու մեր ծրագրի մի մասն է»,-ավելացրել է Ռալֆ Յիրիկյանը:

Ներկայումս, աշխարհում կա 13 խմբի դասակարգված՝ մոտավորապես 240 տիրույթային սերվերի «պատճեն»: Դրանք շահագործվում են տարբեր ընկերությունների կողմից, ինչպիսիք են՝ Նշանակված անվանումների եւ համարների ինտերնետ կորպորացիան (ICANN), «Վերիսայն»-ի (Verisign), եւ մի շարք այլ կազմակերպություններ:

# «Մեր համարը». Հեռախոսակապ ՎիվաՍել-ՄՏՍ-ից՝ տան ու գրասենյակի համար

ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, տեղեկացնում է, որ այժմ ՎիվաՍել-ՄՏՍ-ի «Մեր համարը» փաթեթի շնորհիվ բջջային կապի ծառայություններից կարելի է օգտվել նաեւ ստացիոնար հեռախոսից: Այն հարմար լուծում է ինչպես տան, այնպես էլ փոքր գրասենյակների հեռախոսակապով ապահովվելու համար:

Փաթեթը ներառում է համանուն հետվճարային սակագնային պլանը եւ հատուկ Etros ստացիոնար հեռախոսը՝ նախատեսված ոչ միայն զանգերի, այլ նաեւ SMS հաղորդագրությունների համար: Հեռախոսն ապահովում է քաղաքային եւ բջջային ցանցերի զուգահեռ օգտագործում եւ թույլ է տալիս պահպանել հեռախոսահամարը նոր բնակարան կամ գրասենյակ տեղափոխվելիս, ինչպես նաեւ ուղարկել եւ ստանալ SMS-ներ ստացիոնար հեռախոսով՝ չհրաժարվելով նախկին քաղաքային համարից: «Մեր համարը» փաթեթին կարելի է բաժանորդագրվել նվազագույնը 2 տարով:

Ընդամենը 2000 դրամ ամսավճարի դիմաց կարելի է ստանալ.

* ստացիոնար հեռախոս Etros

* ամսական 300 րոպե ներցանցային խոսելաժամանակ

* ամսական 30 րոպե խոսելաժամանակ դեպի ՀՀ այլ ցանցեր

* ամսական 30 SMS դեպի ՀՀ բջջային ցանցեր

Իսկ ամսվա ընթացքում նշվածից ավելին օգտագործելու դեպքում ծառայությունների վճարը գանձվում է ըստ սահմանված սակագների:

| Տեղական զանգեր | դրամ/րոպե |
|---|---|
| **Դեպի ՎիվաՍել-ՄՏՍ-ի ցանց** | **15** |
| **Դեպի ՀՀ այլ բջջային ցանցեր** | **30** |
| **Դեպի ՀՀ քաղաքային ցանցեր** | **25** |
| **Դեպի 374 97 բջջային ցանց** | **39** |
| **Դեպի 374 47 քաղաքային ցանց** | **39** |
| **SMS** | **դրամ/SMS** |
| **Դեպի ՎիվաՍել-ՄՏՍ-ի ցանց** | **5** |
| **Դեպի ՀՀ այլ բջջային ցանցեր** | **10** |
| **Այլ ուղղություններով** | **20** |

Բաժանորդները կարող են ստուգել իրենց հաշվի մանրամասները՝ ուղարկելով համապատասխան հրահանգը:

| Գործողություն | Հրահանգ |
|---|---|
| **Օգտագործած ծառայությունների արժեքի ստուգում** | ***315#** |
| **Ներառված խոսելաժամանակի եւ SMS-ների մնացորդի ստուգում** | ***311*1#** |
| **Մուտք հրահանգների մենյու** | ***311#** |

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից կամ pda.mts.am բջջային կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:

## Սիրով հրավիրում ենք Ձեզ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակի տոնական միջոցառումներին

### Միջոցառումների ցանկ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90 ամյակի պաշտոնական միջոցառումները մեկնարկելու են երկուշաբթի, նոյեմբերի 19-ին, ժամը 11:30-ին՝ մանկավարժական համալսարանի թանգարանի բացմամբ: Այն գտնվում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի /Տիգրան Մեծի 17/ II հարկում:

Ապա Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում /Ալեք Մանուկյան 13 ա/ ժամը 13:00-15:00-ը տեղի կունենա պատվավոր դոկտորի կոչումների եւ շքանշանների շնորհման արարողություն:

Տոնական ձեռնարկը՝ նվիրված Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին, տեղի կունենա ժամը 18:00-19-ը՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի Համերգային դահլիճում: Միջոցառմանը ներկա է լինելու ՀՀ վարչապետ, Մանկավարժական համալսարանի խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Սիրով հրավիրում ենք մասնակցելու մեր միջոցառումներին:

**Երկուշաբթի, 19 նոյեմբեր, 2012 թ.**

**Ժ. 11:30**

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանի բացում:

Վայր՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, II հարկ:

Տիգրան Մեծի 17, Երեւան:

**Ժ. 13:00-15:00**

Պատվավոր դոկտորի կոչումների եւ շքանշանների շնորհման արարողություն:

Վայր՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետ/:

Ալեք Մանուկյան 13, Երեւան:

**Ժ. 18:00-19:20**

Ձեռնարկ նվիրված Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին:

***Վայր՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր, Համերգային դահլիճ, Ծիծեռնակաբերդի զբոսայգի:***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի14-ի թիվ 1 որոշմամբ**

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ՄՆՀԹՏԹ- ԱՇՁԲ-12/1**

Պատվիրատուն՝ «Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ-ը, որը գտնվում է ք. Երեւան, Մոսկովյան 40 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ-ում «Երբ գիրքը գտնում է նկարչին» խորագրով ցուցահանդեսի ձեւավորման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլորը, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչեւ սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ 10-րդ օրը ժամը 10.00 -ը: Ընդ որում փաստաթղթային ձեւով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձեւով հրավերի տրամադրումն անվճար:

Էլեկտրոնային ձեւով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձեւով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ, Մոսկովյան 40 հասցեով, փաստաթղթային ձեւով մինչեւ սույն հայտարարությունը հրապարակման օրվանից հաշված 10-րդ օրվա ժամը 10:00-ն եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն հրավերի 1-ին մասի 12-րդ բաժնով սահմանված կարգով:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

*«Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ*
*Հեռ.՝ 51-60-21*
*Էլ. Փոստ `Museum@toumanian.am*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ք. Դիլիջանում կենտրոնական բանկին պատկանող շենքերի կարիքներն ապահովելու համար հեռուստացույցներ եւ սառնարաններ ձեռք բերելու նպատակով կազմակերպության ընտրության բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ ք. Դիլիջանում ՀՀ կենտրոնական բանկին պատկանող շենքերի կարիքներն ապահովելու համար հեռուստացույցներ (Lns 1) եւ սառնարաններ (Lns 2) ձեռք բերելու նպատակով մատակարար կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2012թ. դեկտեմբերի 27-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2012թ. դեկտեմբերի 27-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2013թ. հունվարի 15-ին ժամը 16-00:

Բաց ընթացակարգում հաղթողը որոշվելու է՝

1) այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին եւ ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձրն է:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (**www.cba.am**): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին՝ 18-02, 18-05:

***ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 16.11.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: